

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ

Արսեն Հակոբյան

Հյուսիսային Կովկասում հայության ներկա հիմնախնդիրները չափազանց հրատապ են թե՛ տեղի սփյուռքի գոյատևման, թե՛ տարածաշրջանային բախումնաձին իրավիճակի առումով:

Հոդվածը հիմնված է Հյուսիսային Կովկասում 2005թ. մոտ մեկ ամիս տևած հետազոտությունների ընթացքում կատարված անմիջական դիտարկումների վրա: Հետազոտության տարածքն ընդգրկում է հիմնականում Արևելյան Կովկասի հայկական համայնքները, որոնք, ըստ էության, դուրս են մնացել հասարակական և ակադեմիական ուշադրության տեսադաշտից, կամ էլ մերթընդմերթ հիշատակվում են վանդալիզմի այս կամ այն դրսևորման համատեքստում (օր. Բուդյոնովսկը):

Նկատենք, որ 2005թ. դաշտային հետազոտություններից անմիջապես հետո վերոնշյալ տարածաշրջանում լուրջ իրադարձություններ են տեղի ունեցել (Նալչիկյան դեպքերը, Բուդյոնովսկի, Պյատիգորսկի հայկական համայնքների նկատմամբ տեղի ունեցած միջադեպերը):

Այս համատեքստում հրատապ է դարձել Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների իրավիճակին և հիմնախնդիրներին անդրադառնալը¹:

Ղաղստան

Ղերբենտ

Հայ-ղաղստանյան առնչությունները դարերի պատմություն ունեն: Նույնիսկ վաղ միջնադարում զաղստանյան իրականության մեջ առկա էր հայկական էթնիկ և մշակութային բաղադրիչը: Չանդրադառնալով հայ-ղաղստանյան բազմաթիվ առնչություններին՝ նկատենք միայն, որ այս տարածաշրջանը բավական ակտիվ ներգրավված է եղել Հայ և Աղվանից եկեղեցիների քարոզչական ու միսիոներական գործունեության ոլորտում: Այսօր էլ զաղստանյան իրականության մեջ, հատկապես երկրամասի հարավային լեզգիաբնակ հատվածում, պահպանվել են բազում բանավոր հիշողություններ և նյութական մշակույթի վկայություններ (սրբավայրեր,

¹Տե՛ս, օրինակ, *Հակոբյան Ա.*, «Հյուսիսային Կովկասի հայկական համայնքների մասին», *Հանրապետական*, 2004, #10, «Ակնարկ Հիւսիսային Կովկասի հայկական համայնքների մասին», *Ազդակ*, 2005, #26:

գերեզմանոցներ, տապանաքարեր), որոնք աներկբայորեն վկայում են այս տարածաշրջանում հայկական և քրիստոնեական հետքերի մասին: Ավելին, վերջին տասնամյակներում լեզգիների ազգային զարթոնքը գաղափարական առումով որոշակիորեն սնվում է հենց տարածաշրջանի ու բուն Ադվանքի քրիստոնեական մշակութային ժառանգության հետևորդը լինելու հանգամանքով: Դա արտահայտվում է նախնիների քրիստոնեական անցյալի նկատմամբ հպարտության զգացումներով¹ և քրիստոնեական հուշարձանների նկատմամբ որոշակի հոգատարությամբ, որը դրսևորվում է «ինչ որ քրիստոնեական է՝ մերն է» մոտեցման մեջ: Ասվածը վերաբերում է ոչ միայն աղվանական, այլև հայկական ժառանգությանը, սակայն ընդհանուր համատեքստում, հաշվի առնելով հայ-ադրբեջանական, լեզգի-ադրբեջանական հարաբերությունները, կարևորվում է նաև այն, որ ադրբեջանական գիտաքարոզչական մեքենան հարկադրված «պատերազմում» է ոչ միայն հայկական, այլև լեզգիական գործոնի դեմ: Մինևույն ժամանակ, լեզգիական ինքնությունը «կառուցվում» է քրիստոնեական անցյալի նկատմամբ դրական գաղափարներով և որոշակի հակաթուրքական ուղղվածությամբ, որոնց կարևոր ռազմավարական նշանակությունն ակնհայտ է:

Այդ միտումները պարբերաբար տարբեր դրսևորումներ են ունենում: 1980-ական թթ. վերջերին սկիզբ առած լեզգիական ազգային շարժումը խնդիր էր դնում Ադրբեջանի և Հարավային Դաղստանի լեզգիաբնակ շրջանների միավորմամբ միասնական Լեզգիստանի ստեղծումը ՌԴ կազմում: Ադրբեջանում Հ. Ալիևի իշխանության օրոք լեզգիական «Մաղվալ» շարժման դեմ համընդհանուր հալածանքներն ուժեղացան, ակտիվիստների մի մասը ձերբակալվեց, մի մասն էլ տեղափոխվեց Դաղստան: Ներկայումս լեզգիների ազգային շարժման խնդիրը Հարավային Դաղստանը և Դերբենտ քաղաքը լեզգիական «պլացդարմ» դարձնելն է: Այն իրագործվում է այդ տարածաշրջանի ժողովրդագրական փոփոխություններով, իշխանության, տնտեսական ոլորտների «լեզգիացմամբ»՝ առաջին հերթին, բավական գերակշիռ դիրք ունեցող ադրբեջանական տարրի դուրսմղման ճանապարհով²:

Այս միտումները բավական անհանգստացնող են պաշտոնական Բաքվի համար, որն, ըստ տեղեկությունների, վերահսկում է Դերբենտի ադրբեջանական համայնքը և հանդես գալիս հակալեզգիական ու հակահայկական «նախաձեռնություններով» (քարոզչական սադրանքներ ևն)՝

¹ Տե՛ս *Աբդուրաгимов Г.*, «Кавказская Албания–Лезгистан», СПб, 1995, որն, ըստ էության, լեզգիների «պաշտոնական» պատմությունն է: Այն որպես դասագիրք օգտագործվում է դաղստանյան պետական ու մասնավոր բուհերում:

² Մանրամասն տե՛ս *Հակոբյան Ա.*, «Լեզգիական գործոն», Հանրապետական, 2005, # 7:

փորձելով ուղղորդել գործընթացներն իրեն ցանկալի հունով կամ հարուցել դրանք¹:

Այսօր էլ առկա է լարվածություն հայ-ադրբեջանական և լեզգի-ադրբեջանական հարաբերություններում, որը տարբեր դրսևորումներ է ստանում: Այդ առումով Դերբենտ քաղաքը յուրահատուկ «ինդիկատորի» դեր է կատարում: Օրինակ՝ 2005թ. ապրիլին Դերբենտի ամենամեծ ու հին մզկիթում ընդհարում տեղի ունեցավ լեզգիների ու ադրբեջանցիների միջև, որին մասնակցում էին մոտ 200 մարդ: Բաքուն դրան անմիջապես արձագանքեց սադրիչ բնույթ կրող «Դերբենտն ընդդեմ ադրբեջանցիների» հոդվածով, որտեղ ընդհարման պատասխանատվությունը դրվում էր լեզգի «ազգայնականների», Դերբենտի հայկական համայնքի ու Հայաստանի հատուկ ծառայությունների վրա [2]: Ի դեպ, հոդվածում, ըստ էության, շարադրված են Բաքվի մտահոգություններն այս տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացների, մասնավորապես՝ լեզգիական գործոնի ուժեղացման կապակցությամբ: Արտատպելով հոդվածը՝ դադստանյան մամուլը խնդրի լայն քննարկում ծավալեց:

Հետաքրքրական է, որ դադստանյան մամուլը կոշտ արձագանքեց այս հրապարակմանը և նույնիսկ քննարկում ծավալվեց, թե վերջապես ում քաղաքն է Դերբենտը՝ ադրբեջանցիների², թե՛ լեզգիների [3-6]: Ընդ որում՝ այդ հրապարակումները, լայն առումով, լեզգիների պատմության «հասարակայնացմանն» էին ծառայում՝ հետաքրքրություն հարուցելով այդ ժողովրդի անցած ուղու նկատմամբ: Ուշագրավ է ադրբեջանական այդ հրապարակմանն ուղղված առաջին պատասխան հոդվածը, որը շարադրված էր բավական կոշտ լեզգիական ազգայնական և հակաադրբեջանական մոտեցումների հիման վրա: Ընդ որում՝ առաջարկվում էր Դերբենտի Ջումա մզկիթը, որը միջնադարում քրիստոնեական եկեղեցի է եղել, կիսել և մի հատվածը որպես քրիստոնեական սրբավայր վերականգնել ու վերադարձնել ադրբեջանցիների կողմից հալածված և բռնազաղթի ենթարկված քրիստոնյա ուղիներին, որոնք կովկասյան ժողովուրդ են և պատկանում են լեզգիական խմբին [4]:

Ընդհանուր առմամբ, ներկայումս գոնե քարոզչական ճակատում և հասարակական որոշակի ընկալումներում լեզգի-ադրբեջանական հարա-

¹ Հարկ է ընդգծել, որ Ադրբեջանի հակահայկական ու հակալեզգիական ակտիվությունը Դերբենտում և Հարավային Դադստանում դրսևորվեց դեռևս 1988-90թթ., երբ Բաքվից գործուղված էմիսարները Դերբենտում հակահայկական հանրահավաքներ էին կազմակերպում: Տեղի հայությանը հալածելու, տեղահանելու փորձեր կատարվեցին, սակայն լեզգիների ու դադստանյան իշխանությունների ջանքերով այդ սադրանքները կանխվեցին: Հետաքրքրական է, որ ի պատասխան լեզգիների ազգային շարժման ակտիվացման՝ Ադրբեջանի ժողովրդական ճակատը 1988-90-ական թթ. հայտարարեց Դերբենտ քաղաքի նկատմամբ իր նկրտումների մասին [1]:

բերությունները բավական լարված ու խնդրահարույց են: Այս համատեքստում չափազանց կարևոր են Դերբենտի հայկական համայնքի հետ կապված խնդիրները: Համայնքը հայտնվել է բավական նուրբ իրավիճակում, և վերը հիշատակված իրողությունները, կամա թե ակամա, ազդում են նաև նրա վրա: Ըստ էության, Դերբենտի հայկական համայնքի խնդիրը ոչ միայն զուտ սփյուռքյան ու հայապահպանության հարցերի հարթությունում է, այլև ձեռք է բերում կարևոր ռազմավարական նշանակություն վերը նկարագրված իրողությունների համատեքստում՝ հաշվի առնելով լեզգի-ադրբեջանական հարաբերությունները և հնարավոր զարգացումները:

Ըստ տեղեկությունների՝ 1980-ական թթ. վերջերին Դերբենտում բնակվում էր մոտ 3000 հայ [1, ս. 11-12]: Սակայն վերջին մեկուկես տասնամյակում նրանց թիվը համեմատաբար նվազել է՝ կապված տնտեսական դժվարությունների, ընդհանուր անկայունության և հնարավոր լարվածությունների հետ:

1994թ. կազմավորվում է Դերբենտի հայերի համայնքային կառույցը՝ ծավալելով մշակութային, լուսավորչական և կրոնական գործունեություն: Ներկայումս այն նաև Ռուսաստանի հայերի միության տեղական մասնաճյուղն է և դադատանյան կենտրոնը: Համայնքին է պատկանում տեղի հայկական գերեզմանատունը, որը բարեկարգվել և այժմ խնամվում է: Գերեզմանոցը նաև պատմական արժեք է ներկայացնում, քանի որ այստեղ կան նաև հին տապանաքարեր:

Համայնքի վերջին տարիների գործունեության կարևոր ու նշանակալի արդյունքներից է այն, որ համայնքը պաշտոնապես ձեռք բերեց Դերբենտից մոտ 40-50կմ հարավ Մոլլախալիլ գյուղում գտնվող Սբ Գրիգորիս եկեղեցին¹: Այն գտնվում է ադրբեջանական գյուղում, ռուս-ադրբեջանական սահմանից մոտ 10-15կմ հյուսիս, և մինչև այժմ անմխիթար վիճակում էր: Ներկայումս համայնքի ջանքերով ընթանում են եկեղեցու և հարակից տարածքի վերակառուցման ու բարեկարգման աշխատանքներ: Հիրավի, հերոսական գործ է կատարվել, մանավանդ եթե հաշվի առնենք, որ հարկ է եղել բազում խոչընդոտներ հաղթահարել (եղել են սադրանքներ, եկեղեցու պայթեցման մտադրություն ադրբեջանցիների կողմից և այլն):

Համայնքի ջանքերով Դերբենտի նախկին Պիոներտանը կազմակերպվել են հայոց լեզվի դասընթացներ, որոնք վարում է Հայաստանից այստեղ մշտական բնակության տեղափոխված մի երիտասարդ: Համայնքն ունի եռանդուն և ազգային խնդիրներին նախանձախնդիր ղեկավարություն: Հա-

¹ Մինչև 18-րդ դ. վերջը գյուղը հայաբնակ է եղել, իսկ եկեղեցին կառուցվել է Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի նահատակության վայրում, երբ վերջինս 4-րդ դ. քրիստոնեություն էր քարոզում մերձկասպյան տարածքներում և Հարավային Դաղստանում: Այս ավանդություններն ու սրբավայրի կարևորության մասին ընկալումները մինչև այժմ էլ տարածված են Հարավային Դաղստանի բնակչության շրջանում:

յերը ներկայացված են նաև քաղաքի վարչակազմում: Դերբենտի «հին քաղաքի» կենտրոնում է գտնվում 19-րդ դ. կառուցված հայկական եկեղեցին, որը խորհրդային տարիներին վերածվել է քաղաքային թանգարանի և ներկայումս էլ այդպիսին է: Այն, ինչպես նաև քաղաքի ողջ պատմական համալիրը, գտնվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի պահպանության ներքո:

Ղզլար

Բացի Դաղստանի հարավից, հայեր բնակվում են նաև Մախաչկալայում, Խասավյուրտում, Ղզլարում:

Համեմատաբար հոծ հայկական բնակչություն՝ մոտ 3000 հոգի, ներկայումս ապրում է Ղզլար քաղաքում: Պետք է նկատել, որ Ղզլարում հայերը հաստատվել են դեռևս 18-րդ դ.՝ կապված Ռուսաստանի կողմից տարածաշրջանն իրեն հավատարիմ բնակչությամբ, տվյալ դեպքում հայերով բնակեցնելու քաղաքականության հետ: Մինչև 1920-ական թթ. Ղզլարը, ըստ էության, հայկական քաղաք է եղել՝ մշակութային, կրոնական հարուստ ավանդույթներով: Օրինակ՝ քաղաքում 19-րդ դ. վերջին-20-րդ դ. սկզբին կային 3 հայկական եկեղեցի, 1 մզկիթ: Այստեղ են ծնվել նշանավոր երաժիշտ Ռոմանոս Մելիքյանը, հեղափոխական գործիչ Իսահակ Լալայանցը¹ և ուրիշներ:

Խորհրդային տարիների գաղափարախոսական ու քաղաքական պարտադրանքները բացասական ազդեցություն ունեցան տեղի հայության ազգային-մշակութային հետագա զարգացման վրա: Մասնավորապես, եկեղեցու և դպրոցի ոչնչացման հետևանքով ներկայումս այստեղ ապրող հայությունը ռուսախոս է:

Վերջին մեկուկես տասնամյակի իրողությունները նոր մարտահրավերների առջև կանգնեցրին քաղաքի հայությանը: Ազգային համախմբման առումով՝ ռուսների ու վերջին տարիներին այստեղ հաստատված դաղստանցիների համեմատ, հայության դիրքերը բավական թույլ են: Այստեղ, թերևս, դեր է խաղում քաղաքային իշխանությունների վերաբերմունքը, որոնք վերապահումով են մոտենում ազգային խնդիրների արձարձմանը: Մինևույն ժամանակ, սակայն, նույն իշխանությունների թողտվությամբ քաղաքում 5 մզկիթ է կառուցվել և մեկ ռուսական եկեղեցի: Հայկական համայնքին դժվարությամբ հաջողվեց հայկական գերեզմանատանը աղոթատուն կառուցելու թույլտվություն ստանալ (բացումը տեղի է ունեցել 2005թ.):

Ղզլարի քաղաքային վարչակազմում հիմնականում ռուսներ են ներկայացված, որոնք մեծ մասամբ նախկին խորհրդային համակարգի ներկայացուցիչներ են: Դրա հետ մեկտեղ՝ տեղական իշխանության համա-

¹Ներկայումս քաղաքում պահպանվել է Ի.Լալայանցի արձանը, կա նրա անունը կրող փողոց:

կարգում աստիճանաբար մեծանում են նաև դադասացիների կշիռն ու ազդեցությունը: Քաղաքում վերջին տարիներին նկատվում է հայ և ռուս բնակչության արտագաղթ՝ կապված սոցիալ-տնտեսական խնդիրների հետ, ինչը զուգակցվում է դադասացիների տեսակարար կշռի աճով: Մինչդեռ նախկինում Ղզլարում նրանք բավական քիչ են եղել, և քաղաքը ռուս-հայկական համարում է ունեցել (խորհրդային տարիներին՝ ավելի շատ «ռուսական»):

Տեղի հայերն ավանդաբար զբաղվել են խաղողագործությամբ ու գինեգործությամբ: Ներկայումս էլ Ղզլարի կոնյակի գործարանի տնօրենը հայ է, աշխատակիցների գերակշիռ մասը նույնպես հայեր են:

Ղարաբաղի

Ղարաբաղյին Դադասանի միակ հայկական գյուղն է: Գտնվում է Ղզլարից մոտ 20-30կմ հյուսիս: Բնակչությունը հայախոս է: Մինչև վերջին մեկուկես տասնամյակը գյուղը հիմնականում հայերով է բնակեցված եղել: Սակայն վերջին տարիներին նկատվում է դադասացիների տեսակարար կշռի ավելացում, և այդ միտումը պահպանվում է նաև այժմ: Ըստ գյուղական վարչակազմի 2004թ. տվյալների՝ գյուղում բնակվում են 441 հայեր, 191 դարգիններ և այլն: Հաշվի առնելով ծնելիության ավանդական առավել բարձր ցուցանիշները դադասացիների շրջանում՝ կարող ենք փաստել նրանց հետագա աճի միտման մասին: Գյուղի հայ բնակիչներն ավանդաբար զբաղվել են խաղողագործությամբ, սակայն գորբաչոյան վերակառուցման շրջանում հայտարարված ալկոհոլիզմի դեմ պայքարը հանգեցրեց նրան, որ խաղողի այգիները ոչնչացվեցին (այն տարածվեց ողջ Դադասանի վրա, և ներկայումս փորձեր են կատարվում վերականգնելու խաղողագործությունը երկրում): Դրա հետևանքով սոցիալ-տնտեսական իրավիճակը խիստ վատթարացավ: Այս հանգամանքը, ինչպես նաև հասարակական, տնտեսական, քաղաքական համակարգի փոխակերպումների հետևանքով առաջ եկած դժվարություններն ու խնդիրները հանգեցրին հայկական բնակչության արտագաղթին՝ հիմնականում Բուդյոնովսկ և ռուսաստանյան այլ քաղաքներ: Հարկ է նկատել, որ նույնիսկ չեչենական պատերազմի տարիներին Ղարաբաղյին համարվել է առավել հանգիստ ու խաղաղ բնակավայր: Այստեղ նույնիսկ Հայաստանից եկած մի քանի վերաբնակներ կան:

1988-90-ական թթ. Ղարաբաղյեցիների մոտ նույնպես ազգային վերագարթոնքի միտումներ նկատվեցին: Դպրոցում ուսուցանվում էր հայոց լեզու, իսկ Հայաստանից համապատասխան դասագրքեր էին ուղարկվում: Սակայն, ցավոք, վերջին տարիներին այդ դասաժամերը հանվել են ծրագրից: Խնդիրն այն է, որ ըստ ՌԴ օրենսդրության, լեզվի դասաժամեր կարող

են մտցվել այն ժամանակ, երբ դասարաններում տվյալ ազգությանը պատկանող աշակերտների թիվը 5-ից ավելի է, իսկ վերջին տարիներին՝ կապված ժողովրդագրական իրավիճակի հետ, հայ աշակերտները տարրական դասարաններում 2-3 հոգի են և հավասարվում են դադատանցիների թվաքանակին:

Վերջին տարիներին ազգային-մշակութային համայնքային կառույց ձևավորելու փորձեր են կատարվել, սակայն, այս համատեքստում, հայերը ձեռնպահ են մնացել ժամատան կամ աղոթատան կառուցումից՝ մտավախություն ունենալով, որ դադատանցիների պատասխան նախաձեռնությունը որոշակի խնդիրներ կարող է հարուցել:

2005թ., սակայն, գյուղի դադատանցի բնակիչները նախաձեռնել են մահմեդական աղոթատան կառուցումը հենց բնակավայրի մուտքի մոտ, ինչն առաջ էր բերել հայերի բուռն հակազդեցությունը, որոնց ջանքերով էլ աղոթատան կառուցումը կանխվեց՝ կառուցվելիք շինության անօրինականության պատրվակով: Հայկական կողմի մատուցմամբ՝ աղոթատունը պետք է կառուցվի գյուղի մահմեդական հատվածում, այլ ոչ թե հենց բնակավայրի մուտքի մոտ՝ դառնալով Դադատանում հայկական գյուղի խորհրդանիշ:

Այս իրադարձություններն ակտիվացրել են ազգային-մշակութային ուղղությամբ հայ բնակչության մեջ սկսված խմորումները, և արդեն գործուն քայլեր են ձեռնարկվում կրոնական-մշակութային համայնքային միավորում ձևավորելու ուղղությամբ:

Նկատենք նաև, որ վերջին տարիների հայտնի իրադարձությունների հետևանքով առաջ եկած հիմնախնդիրները դրդել են շատերին զինվորագրվել Թերեքյան կազակությանը (ք.Ղզլար)՝ որպես ապահովության հավանական երաշխիքի:

Հայության ընդհանուր ընկալումներում տեղի են ունեցել փոփոխություններ՝ կապված նոր «իրավիճակում» հայտնվելու հանգամանքի հետ, մասնավորապես՝ համընդհանուր էր այն մտայնությունը, թե իրենք նախկինում ապրում էին «Ռուսաստանում», իսկ այժմ հայտնվել են «Դադատանում»: Միննույն ժամանակ, էթնիկական ակտիվացման ու տազնապի որոշակի ռեսուրս են պարունակում «Մա մեր դադատանյան հողն է» ոճով կարգախոսները:

Մտավորայտի մարզ

Բուլղոնովսկ

1999թ. մարդահամարի տվյալներով՝ քաղաքն ունի մոտ 70 հազար բնակիչ, որոնցից պաշտոնապես հայ են 7000-ը: Մակայն ոչ պաշտոնական տվյալներով՝ հայերի թիվը կարող է հասնել մինչև 20 հազարի, որոնց մեջ մտնում են նաև Հայաստանից արտագաղթած, Ադրբեջանից բռնագաղթած մեր հայրենակիցները, կիսաձուլված և խառը ընտանիքները և այլն:

Խորհրդային տարիներին ընթացել է քաղաքի հայության ինտենսիվ ռուսացման գործընթաց՝ ռուսական դպրոցներ, երեք եկեղեցիներից երկուսի ոչնչացում, պատերազմից հետո ռուսական բնակչության հոսքի ակտիվացում և այլն: Այնուամենայնիվ, չնայած այս ամենին՝ ավագ սերունդը դեռ հայախոս է:

Վերջին 15 տարիների իրադարձություններն ակտիվացրել են նաև տեղի հայությանը: Ձևավորվել է «Մուրբ Խաչ» համայնքային միավորումը, գործում է Մբ Խաչ եկեղեցին:

Տեղի հայության ընդհանուր իրավիճակը բավական բարդ է, ինչը պայմանավորված է տարբեր խմբերի (հայաստանցիներ, ադրբեջանահայեր) ներկայությամբ: Պետք է նկատել, որ կա լուր հակադրություն «եկվոր» և «տեղաբնիկ» հայերի միջև, ինչը վերջին տարիներին փոքր-ինչ մեղմվել է: Տեղի ռուսները նույնպես, ի տարբերություն «եկվոր» հայերի, քաղաքի հնաբնակ հայերին անվանում են «տեղացի հայեր», «մեր հայեր»: Այդ հակադրությունը պայմանավորված է սոցիալական, կենցաղային և այլ գործոններով:

Նման բարդ միջավայրում՝ ազգային համախմբման առումով լուրջ դեր է վերապահված հայկական եկեղեցուն, որի դերակատարությունն աճում է, ինչը կարևոր է՝ կապված շրջակա բնակավայրերում Ադրբեջանից տեղահանված ուղիների առկայության հետ:

«Հայկականության» ամրապնդման ուղղությամբ վերջին տարիներին բավական կարևոր միջոցառումներ են ձեռնարկվել. քաղաքի հիմնադիր հայրերի հուշարձանի բացում, Մեծ եղեռնի 90-ամյակին նվիրված քայլարշավ և սգո հանրահավաք՝ քաղաքային վարչակազմի մասնակցությամբ, Հայոց ցեղասպանությունը դատապարտելու կոչ՝ ուղղված քաղաքային Դումային, նոր եկեղեցու կառուցման նախաձեռնում և այլն:

Պետք է նշել, սակայն, որ քաղաքում վերջին շրջանում հայերի դեմ ուղղված մի շարք գործողություններ են արձանագրվել: 2005թ. հոկտեմբեր-նոյեմբերին պղծվեց քաղաքի հիմնադիր հայրերին նվիրված հուշարձանը: Այս փաստը, թերևս, Հյուսիսային Կովկասի հայության դեմ ուղղված լայնա-

ծավալ սադրանքի մի օղակն էր, քանի որ նույն ժամանակահատվածում՝ օրերի տարբերությամբ, սադրանքներ եղան Պյատիգորսկի հայկական համայնքի նկատմամբ:

Ավելորդ չէ հիշեցնել, որ Հյուսիսային Կովկասի հայության դեմ ուղղված գործողությունները և այս համատեքստում՝ տարածաշրջանում հայռուսական կամ հայ-կազակական բախումներ հրահրելը Ադրբեջանի և Թուրքիայի հատուկ ծառայությունների գործունեության առաջնահերթությունների մեջ են մտնում:

Մասնավորապես, 2005թ. մարտին Նովոռոսիյսկում տեղի ունեցած հայ-կազակական բախման արդյունքում քաղաքային իշխանություններն արգելեցին տեղի հայերին բողոքի ցույց անցկացնել տեղի թուրքական հյուպատոսության դիմաց [7]: Այս բախումներն «աննկատ» չմնացին Ադրբեջանի ԶԼՄ ուշադրությունից, և վերջիններս հանդես եկան «ավագ եղբոր» պաշտպանությամբ, ավելին՝ ադրբեջանական կողմի շահագրգռությունն այս ուղղությամբ նոր որոշակի փաստերով ամրապնդվեց [8]: Իսկ դրանից անմիջապես հետո հիշյալ հյուպատոսությունը բողոքի նամակ հղեց Կուբանի պետական համալսարանի ղեկավարությանը՝ «Մեծ եղեռնի» թեմայով գիտաժողով կազմակերպելու առիթով [9]:

Պետք է նկատել, սակայն, որ հիշյալ արտաքին գործոնների գործառնության ու ակտիվացման համար պարարտ հող են ռուս-կազակական ազգայնականության անառողջ դրսևորումները, որոնք, որոշակի «հակակովկասյան» ուղղվածություն ունենալով, իրենց ազդեցությունն են թողնում նաև տեղի հայության վրա: Մեր դիտարկումներով, այդ երևույթներն առավել ընդգծված են Կրասնոդարի երկրամասում, քան հյուսիսկովկասյան այլ շրջաններում, որտեղ ռուս-կազակական տարրը կազմակերպվածության ու ինստիտուցիոնալ զարգացման առումով համեմատաբար թույլ է: Ավելին, այդ շրջաններում ռուսական հասարակական ընկալման մեջ հենց հայկական տարրն է հանդիսանում հուսալիության ու ապահովության երաշխիք, ինչը առավել արդիական է դառնում չեչենական իրադարձությունների համատեքստում:

Այսպիսով, վերը ներկայացված իրողությունները միայն ընդգծում են այն բարդ ու խնդրահարույց իրավիճակը, որում հայտնվել է Հյուսիսային Կովկասի հայությունը: Աշխարհաքաղաքական, գաղափարախոսական, իրավիճակային փոփոխություններն ու գործընթացներն իրենց անմիջական ու միջնորդավորված ազդեցությունն են թողնում հայության այս հատվածի վրա:

Սեփական և ինքնուրույն մոտեցումների, տեղեկատվական ապահովման, քարոզչական գործունեության համարժեք քաղաքականության մշակ-

ման անհրաժեշտությունը տարածաշրջանի հայության վերը նշված խնդիրների լուծման համար, առավել քան երբևէ, հրատապ է, որպեսզի հետագայում «հերթական» «անկանխատեսելի» իրադարձությունների հետևանքով չդիմավորենք փախստականության հերթական ալիքը:

Դեկտեմբեր, 2005թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Григорян В.*, Насильственная ассимиляция мусульманских национальных меньшинств в Азербайджане, Ереван, 1992, с. 11-12.
2. «Дербент против азербайджанцев», газ. «Черновик», 2005, N32.
3. *Курбанов Ханжан*, Международная провокация агентства, газ. «Новое дело», 2005, N37, [http:// www.nedelo.ru](http://www.nedelo.ru).
4. *Гьаджизхва Чудухри*, Чей город Дербент?, газ. «Черновик», 2005, N34.
5. *Аварс Бергман*, Бергман против Чудухри, газ. «Черновик», 2005, N39.
6. *Тимур Айтберов*, Бергман и его изыскания о лезгинах, газ. «Черновик», 2005, N 44.
7. <http://1917.com/Actions/AntiF/1111690560.html>
8. *Сафаров Б.*, Армяне нашли «виновника» их столкновения с казаками в Новороссийске, http://www.echo-az.info/archive/2005_04/1051/obshestvo08.shtml
9. Турция недовольна проведением в Краснодаре конференции по теме Геноцида армян, <http://www.regnum.ru/news/445916.html>

ПОЛОЖЕНИЕ АРМЯН СЕВЕРНОГО КАВКАЗА В СВЕТЕ ПОСЛЕДНИХ РАЗВИТИЙ

Арсен АКОПЯН

Резюме

Нынешние проблемы армянства Северного Кавказа весьма актуальны как в плане выживания местной диаспоры, так и в связи с конфликтогенной ситуацией в регионе.

В статье представлено положение армянства в Дагестане, Ставропольском крае. В Дагестане армяне проживают в основном в городах Кизляр и Дербент, селе Карабахлы. В городе Буденовск Ставропольского края РФ так-

же проживают армяне, обосновавшиеся здесь как в течение последнего десятилетия, так и задолго до этого как основатели этого города, до советизации называвшегося Сурб Хач.

События последних десятилетий поставили перед местным армянством новые, обусловленные своеобразием региона, проблемы и в плане сохранения национальной самобытности, и в плане противостояния общим вызовам. В этом контексте в некоторых населенных пунктах были сформированы национально-культурные общинные объединения, которые пытаются организовать национально-религиозную жизнь местных армян.

Геополитические, идеологические процессы и их ситуационные изменения непосредственно и опосредованно воздействуют на ход жизни местного армянства.

Необходимость разработки политики информационного обеспечения, собственных и самостоятельных подходов для решения проблем армянства региона сегодня актуальна, как никогда.